ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Գովազդը տեսալսողական մեդիայում

1. Արգելվում է մինչեւ 10 րոպե տեւողությամբ լսողական հաղորդումներում եւ մինչեւ 20 րոպե տեւողությամբ տեսալսողական հաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը (ընդմիջումը):

2. Արգելվում է տեսալսողական հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տեւողությամբ: Օրվա եթերային ժամի հաշվարկը սկսվում է յուրաքանչյուր օր 00.00 ժամից:

3. Արգելվում է գովազդային ընդհատումը լրատվական հաղորդումների ժամանակ:

4. Արգելվում է գովազդը Հանրային հեռարձակողի կրթական-մշակութային ուղղվածության ծրագրում, բացառությամբ Հանրային հեռարձակողի կրթական-մշակութային ծրագրերում **ժամանցային** տեսալսողական հաղորդումների հեռարձակման *(գ/ֆ, վ/ֆ, հ/ս, համերգ)* ժամանակ~~:~~

~~5. Արգելվում է տեսալսողական ծրագրի անվան մեջ ներառել այնպիսի բառ(եր), որը նույնական է կամ շփոթելու աստիճանի նման է վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գործող շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի կազմակերպչի անվանմանը:~~

~~6.~~ 5 Տեսալսողական մեդիայում հեռարձակվող գովազդային հատուկ հաղորդումների հաճախականությունը չի սահմանափակվում, սակայն յուրաքանչյուր առանձին հաղորդման տեւողությունը եթերային 1 ժամվա ընթացքում չպետք է լինի 5 րոպեից ավելի:

~~7.~~6 Սույն հոդվածի դրույթները չեն գործում, եթե տեսալսողական հաղորդումը կրում է բացառապես գովազդային բնույթ, կամ գովազդը հաղորդվում է գովազդային տեսալսողական ծրագրով:

~~8~~7. Տեսալսողական հաղորդումների հովանավորությունը, գովազդի զուգակցումը տեսալսողական հաղորդումների հետ «վազող տողի» եղանակով,

հեռուստախանութները, ինչպես նաեւ ~~հեռուստառադիոհաղորդումների~~ ***տեսալսողական հաղորդումների*** ազդին նախորդող եւ (կամ) հաջորդող տվյալ ~~հեռուստառադիոհաղորդման~~ ***տեսալսողական հաղորդման*** հովանավորների մասին ցանկացած տեսակի տեղեկության հեռարձակումը համարվում են տեսալսողական մեդիայում հեռարձակվող գովազդ:»

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «ռադիոհեռուստահաղորդումներում» բառը փոխարինել «տեսալսողական հաղորդումներում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 10-րդ մասի ~~առաջին պարբերության~~ «հեռուստահաղորդմամբ» բառը փոխարինել «տեսալսողական հաղորդմամբ» բառերով,

2) 12-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12.Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, խաղատան, գիշերային ակումբի, ծխախոտի, ինչպես նաեւ սույն օրենքով՝ տեսալսողական մեդիայում գովազդի համար արգելված ապրանքների եւ ծառայությունների՝ որպես հովանավորների հիշատակումը Հանրային հեռարձակողների ծրագրերում:»,

3) 12.1-րդ մասը ~~փոխարինել 13-րդ մասով~~՝շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12.1Հանրային հեռարձակողի ծրագրերում արգելվում է վիճակախաղի, ոչ խաղարկությունով վիճակախաղի, խաղարկությունով վիճակախաղի, համակցված վիճակախաղի, գովազդային վիճակախաղի, տոտալիզատորների, ինտերնետ շահումով խաղերի, գիշերային ակումբների գովազդը:»,

4) 14-րդ մասում «հեռուստառադիո» բառը փոխարինել «տեսալսողական» բառով:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.Տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն է:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման ~~հաջորդ~~ հաջորդող տասներորդ օրը: